

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 17-ԻՆ ԺԱՄԸ 10:30-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ՝

Տ. Դավթյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարարի պաշտոնակատար
Կ. Մինասյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարարի պաշտոնակատարի առաջին տեղակալ
Վ. Ռազլոզ	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հայաստանյան գրասենյակի ղեկավար
Գ. Պողոսյան	«Գործարար շահերի պաշտպանության ցանց» ՀԿ-ի համակարգող
Մ. Առաքելյան	«Հայաստանի տրանսպորտային առաքողների միություն» ՀԿ-ի նախագահ
Կ. Գալաստյան	«Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամ» ՀԿ-ի գործադիր տնօրեն
Կ. Մարտիրոսյան	Երևանի առևտրաարդյունաբերական պալատի գործադիր տնօրեն

Մասնակիցներ՝

Ս. Կարայան	ՀՀ ֆինանսների նախարարի պաշտոնակատարի տեղակալ
Վ. Կտիկյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի պաշտոնակատար
Ս. Տոնոյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի պաշտոնակատար
Վ. Կարապետյան	«ՓՄՁ ԶԱԿ» հիմնադրամի գործադիր տնօրեն

- | | |
|------------------|--|
| Գ. Պողոսյան | Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի գործարարության աջակցման գրասենյակի ղեկավար |
| Կ. Վարդանյան | ՀՀ Էկոնոմիկայի նախարարության գործարար միջավայրի բարելավման վարչության պետ |
| Ա. Եգանյան | ՀՀ Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի ՓՄՁ զարգացման վարչության պետ |
| Հ. Ավագյան | Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի փորձագետ |
| Դ. Հարությունյան | Գործարարության աջակցման գրասենյակի հանրային կապերի փորձագետ |
| Ա. Ավանեսյան | ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության փորձագետ |
1. 2012 թվականի ընթացքում իրականացված աշխատանքների վերաբերյալ ՓՄՁ խորհրդի քարտուղարության հաշվետվություն

(Գ. Պողոսյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի գործարարության աջակցման գրասենյակի ղեկավար Գ. Պողոսյանի ներկայացրած 2012 թվականի ընթացքում իրականացված աշխատանքների վերաբերյալ ՓՄՁ խորհրդի քարտուղարության հաշվետվությունը.

2) հանձնարարել ՀՀ Էկոնոմիկայի նախարարի պաշտոնակատարի առաջին տեղակալ Կ. Մինասյանին՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը մինչև ՀՀ կառավարության նիստի քննարկմանը ներկայացնելը՝

ա. ուսումնասիրել սուրհանդակային ծառայության լիցենզավորման գործընթացի միջազգային լավագույն փորձը,

բ. շահագրգիռ կողմերի հետ համատեղ վերանայել (նվազեցնել) սուրհանդակային ծառայության լիցենզավորման տրամադրման համար սահմանվող պետական տուրքի

չափը (օրինակ՝ սահմանել 100.0-200.0 հազ. դրամ)՝ փոխարենը սահմանելով լրացուցիչ սահմանափակումներ, հստակեցնելով լիցենզիայի տրամադրման պայմանները.

գ. շահագրգիռ կողմերի հետ համատեղ քննարկել նաև կոնկրետ ռիսկերի (առաքվող ապրանքանու տեղ չհասցնելու, մարդկանց կյանքին և առողջությանը վնաս հասցնելու, առաքվող ապրանքի փչացման և այլ դեպքերի հատուցման) ապահովագրության համակարգի ներդրման հարցը,

դ. վերջնական լրամշակված և փոխհամաձայնեցված տարբերակը ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ:

3) առաջարկել ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Զավադյանին եռօրյա ժամկետում տրամադրել տեղեկատվություն հարկային մարմինների կողմից իրավաբանական անձանց բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների արգելադրման գործընթացում կիրառվող փաստացի մեխանիզմների (բանկային հաշվի ամբողջական գումարի, թե պարտավորության մեծության մասով կիրառվող արգելանքի) մասին:

2. Ռիելթորական կազմակերպությունների համար սահմանված արտոնագրային վճարի չափի վերաբերյալ

(Գ. Պողոսյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ ֆինանսների նախարարի պաշտոնակատարի տեղակալ Ս. Կարայանին՝

1) մեկամսյա ժամկետում «Գործարար շահերի պաշտպանության ցանց» ՀԿ-ի համակարգող Գ. Պողոսյանի հետ համատեղ քննարկել Ռիելթորական կազմակերպությունների հարկման մեխանիզմների փոփոխության հարցը և ըստ այդմ ներկայացնել առաջարկություններ.

2) մեկամսյա ժամկետում ամփոփել ռիելթորական կազմակերպությունների 2012 թվականի տարեկան հաշվետվությունների արդյունքները և դրանք ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ:

3. Մինչև 100 միլիոն ՀՀ դրամ շրջանառություն ունեցող ձեռնարկությունների կողմից պարզեցված հաշվապահական հաշվառում վարելու անհրաժեշտության վերաբերյալ

(Հ. Ավագյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ ֆինանսների նախարարի պաշտոնակատարի տեղակալ Ս. Կարայանին՝ լրամշակել ՀՀ ԱԺ-ում գտնվող «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, ըստ որի նախորդ օրացուցային տարում ստացման ենթակա հասույթի 100 մլն դրամ մեծությունը չգերազանցող հարկ վճարողների համար կսահմանվի հարկային հաշվառման պարզեցված կանոնակարգ, և վերջիններս հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների և միջազգային ստանդարտների ուղեցույցների փոխարեն կկիրառեն հաշվառման պարզեցված կանոնակարգը:

4. Հաշվապահական հաշվառման ծառայություններ մատուցող փոքր կազմակերպությունների կողմից շրջանառության հարկի կիրառման անհրաժեշտության վերաբերյալ

(Հ. Ավագյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ ֆինանսների նախարարի պաշտոնակատարի տեղակալ Ս. Կարայանին՝ իր իսկ առաջարկությանը համապատասխան՝ վերանայել ներկայիս գործող ընթացակարգը:

5. Սննդամթերքի ներմուծման ընթացքում ներկայացվող փաստաթղթերի հետ կապված խնդրի վերաբերյալ
-

(Գ. Պողոսյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն ՎԶԵԲ Գործարարության աջակցման գրասենյակի ղեկավար Գ. Պողոսյանի կողմից ներկայացված՝ սննդամթերքի ներմուծման ընթացքում ներկայացվող փաստաթղթերի հետ կապված խնդիրը:

2) հանձնարարել ՀՀ Էկոնոմիկայի նախարարի պաշտոնակատար Տ. Դավթյանին՝

ա. սննդամթերքի ներմուծման ընթացքում ներկայացվող փաստաթղթերի պահանջի մասով DCFTA-ի շրջանակներում ԵՄ համապատասխան երկրների հետ սկսել բանակցային գործընթաց և դրանք կարգավորել երկկողմ միաջազգային պայմանագրերով,

բ. հայկական արտադրության սննդամթերքների արտահանման, այդ թվում՝ անմաքս վաճառակետերում (Դյուֆի ֆրի) ապարանքների մատակարարման ժամանակ վերացնել պահանջվող փաստաթղթերի ներկայացման պահանջը:

6.1. ՓՄՁ զարգացման խորհրդի անդամների փոփոխության մասին

(Կ. Մինասյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ ՓՄՁ զարգացման խորհրդի կազմում «Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամ» ՀԿ-ի գործադիր տնօրեն Կ. Գալստյանի փոխարեն ընդգրկել Հարկ վճարողների շահերի պաշտպանության ՀԿ-ի նախագահ Փ. Թադևոսյանին:

6.2 Ոչ ռեզիդենտների շահութահարկով հարկման ռեժիմի վերանայման վերաբերյալ առաջարկությունների մասին

(Կ. Մինասյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ ֆինանսների նախարարի պաշտոնակատարի տեղակալ Ս. Կարայանին՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարի պաշտոնակատարի առաջին տեղակալ Կ. Մինասյանի հետ համատեղ՝

1) մեկամսյա ժամկետում ուսումնասիրել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործող ընկերությունների մոտ շահութահարկով հարկման մասով առկա խնդիրները և ըստ այդմ ներկայացնել առաջարկություններ:

2) քննարկել ոչ ռեզիդենտների կողմից մարքեթինգի և գովազդային ծառայությունների ձեռքբերման գծով սահմանված հարկման ռեժիմի վերանայման հնարավորության հարցը և առաջարկություն ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

